ISSN 2579-2571

Սրահեր

Մանկական քրիստոնեական ամսագիր

6+

5/2021

ԸՆԿԵՐՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՈՉ ՈՔ ՉԻ ՏԵՍԵԼ

էջ 8

ԻՆՉՊԵՍ ԵՐԿԱՐԱՑՆԵԼ ԱՄԱՌԸ

էջ 26

ՖՈՒՏԲՈԼ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ՞

էջ 10

ԸՆՏԱՆԻՔ

Կարդա՛ բուրգում թաքնված բառը և իմացի՛ր, թե ինչի մասին է ամսագրի այս համարը:



ՇԱԲԱԹՎԱ ՍԻՐԵԼԻ ՕՐԸ

Շաբաթն անցավ.

Կիրակի 8.00

Նվ. Տատյանա Կոստոբցկայա

ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

Վալդեմար Յորն

Նոր Կտակարանում, մենք այն անվանում ենք Ավետարան, կա մի գիրք, որը նկարագրում է առաջին Եկեղեցու պատմությունը: Այն կոչվում է Գործք առաքելոց: Այդ գիրքը գրել է Ղուկաս անունով մի բժիշկ: Նա է գրել նաև Ավետարաններից մեկը, որն իր անունով էլ կոչվում է:

Ղուկասն ուղեկցում էր Պողոս առաքյալին իր միսիոներական ուղևորությունների ընթացքում: Այն ամենն, ինչ նա տեսել է, և նրան պատմել են մարդիկ, նա գրի է առել այդ գրքում:

Այն սկսվում է հրաժեշտով: Հիսուսը հրաժեշտ է տալիս Իր աշակերտներին ու համբարձվում երկինք: Ահա Նրա վերջին խոսքերը՝ ուղղված աշակերտներին. «Երուսաղեմից մի՛ հեռացեք, այլ սպասե՛ք Հոր խոստմանը, որի մասին Ինձնից լսեցիք, թե հիրավի, Հովհաննեսը ջրով մկրտեց, բայց դուք, սրանից շատ օրեր չանցած, Սուրբ Հոգով պիտի մկրտվեք... Դուք զորություն պիտի ստանաք, երբ Սուրբ Հոգին ձեր վրա գա, և Իմ վկաները պիտի լինեք և՛ Երուսաղեմում, և՛ ամբողջ Հրեաստանում, և՛ Սամարիայում, և՛ երկրի ամենահեռավոր ծայրերում»: Այն մասին, թե ինչ է կատարվել հետո, պատմում է Գործք առաքելոց գիրքը:

Դրանից տասը օր անց աշակերտները, նրանց ընկերներն ու բարեկամները հավաքվեցին մի տանը, որպեսզի աղոթեին Աստծուն: Նրանք սպասում էին Հիսուսի խոստմանը: Հանկարծ աղմուկ լսեցին, ասես ուժգին քամի լիներ:

Աղոթող աշակերտների գլխավերևում կրակե լեզուներ հայտնվեցին: Առաքյալները հանկարծակի սկսեցին խոսել լեզուներով, որոնք չէին սովորել: Աղմուկի պատճառով մարդիկ հավաքվեցին. հռոմեացիներ, պարսիկներ, արաբներ: Նրանք շատ զարմացած էին. առաքյալները խոսում էին իրենց բարբառներով ու լեզուներով: Նրանք իրենց հարազատ լեզվով լսում էին Աստծո մեծամեծ գործերի մասին:

Պետրոս առաքյալը ոտքի ելավ զարմացած ամբոխի առջև և ասաց, որ իրենց տեսածն ու լսածն Աստվածաշնչի մարգարեության իրագործումն է: Աստված այս աշխարհ է ուղարկել Իր Սուրբ Հոգին: Եվ բոլոր նրանք, ովքեր կհավատան Հիսուս Քրիստոսին, բոլորը, ովքեր կապաշխարեն ու կընդունեն Նրան որպես Տեր, ևս կստանան Սուրբ Հոգին ու կդառնան Աստծո զավակները:

Պետրոսն այնքան բոցաշունչ ելույթ ունեցավ, և Աստված այնպես օրհնեց նրա քարոզը, որ հենց այդ օրը շատերն ապաշխարեցին ու մկրտություն ընդունեցին: Առաջին մկրտությունը շատ մեծ էր. երեք հազար մարդ միացավ Քրիստոսի Եկեղեցուն:

Այդ օրը, իսկ դա Պենտեկոստեի տոնն էր, մենք հիմա տոնում ենք որպես Սուրբ Հոգու գալստյան օր, որպես Քրիստոսի Եկեղեցու ծննդյան օր:

Ի՞նչ ես կարծում.

1. Ո՞վ է գրել Գործք առաքելոց գիրքը:
2. Ի՞նչ ենք տոնում մենք Պենտեկոստեի օրը:
3. Մենք ի՞նչ պետք է անենք, որպեսզի դառնանք Քրիստոսի Եկեղեցու անդամ:

Այս պատմությունը դու կարող ես կարդալ Գործք առաքելոց գրքի առաջին երկու գլուխներում:

Նկ. Լարիսա Գորոշկո

Բարի հովիվը

Տեղադրի՛ր բաց թողնված բառերը: Թվային ծածկագրի միջոցով կարդա՛ ներքևի աստվածաշնչյան համարը:

1. Ես եմ բարի $\underline{}_{6}$ $\underline{}_{1}$ $\underline{}_{7}$ $\underline{}_{9}$ $\underline{}_{7}$ **ը,** $\underline{}_{13}$ **ես իմ ոչխարներին ճանաչում եմ և ճանաչվում եմ իմը եղողների կողմից:**

2. Ինչպես Հայրը Ինձ $\underline{}_{15}$ $\underline{}_{9}$ $\underline{}_{12}$ $\underline{}_{9}$**, այդպես էլ** $\underline{}_{3}$ $\underline{}_{21}$ **գիտեմ Հորը, և ես Իմ** $\underline{}_{10}$ $\underline{}_{18}$ $\underline{}_{5}$ $\underline{}_{11}$ $\underline{}_{14}$ **ը դնում եմ ոչխարների** $\underline{}_{6}$ $\underline{}_{5}$ $\underline{}_{8}$ $\underline{}_{5}$ $\underline{}_{2}$**:**

3. Իմ ոչխարներն Իմ ձայնը $\underline{}_{17}$ $\underline{}_{21}$ $\underline{}_{4}$ $\underline{}_{8}$ **են, և ես գիտեմ** $\underline{}_{11}$ $\underline{}_{2}$ $\underline{}_{5}$ $\underline{}_{11}$ $\underline{}_{20}$ **և նրանք հետևում են Ինձ:**

4. Իմ հայրը, որ նրանց տվեց Ինձ, բոլորից $\underline{}_{8}$ $\underline{}_{3}$ $\underline{}_{16}$ **է, և ոչ մեկը չի** $\underline{}_{10}$ $\underline{}_{5}$ $\underline{}_{2}$ $\underline{}_{1}$ $\underline{}_{19}$ **Իմ Հոր ձեռքից հափշտակել նրանց:**

1	2	1	7	6	3	12	13

4	2

3	2	10	4

10	5	8

3	2	3	14

6	1	15	9

6	5	7	5	14	7	5	16

17	9	11	3	11

9	8

5	11	4	11	1	7

3	21

5	18	11	12	3	19

3	8

11	2	5	11	20

		Ջ
8	3	22

:

Կազմեց Արփինե Մինասյանը

ՈՂՋ ՏԻԵԶԵՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Վալդեմար Ցորն

Մի ժամանակ չկար ոչինչ: Նույնիսկ չկային երկինքը, Արևը և Երկիրը: Չկային ո՛չ աստղերը, ո՛չ լույսը... Նույնիսկ ժամանակը չկար: Հավիտենություն էր: Կար միայն անտեսանելի հոգևոր աշխարհը: Այդ աշխարհում կար Աստված ու Նրա ստեղծած հրեշտակները:

Աստված ցանկացավ, որ հավիտենության մեջ Իր հետ լինեն Իրեն նման արարածներ և որոշեց ստեղծել մարդկանց: Նախ Նա ստեղծեց ողջ Տիեզերքը, այնուհետև Երկիրն ու մեր ողջ աշխարհը, իսկ վերջում՝ արարման վեցերորդ օրը, Նա ստեղծեց առաջին մարդկանց՝ Ադամին ու Եվային:

Աստված նրանց ազատություն տվեց, որ մարդիկ կարողանային ինքնուրույն որոշել. ցանկանու՞մ են իրենք հավիտյան ապրել Աստծո հետ, թե՞ ոչ: Դրա համար Նա տնկեց բարու և չարի գիտության ծառը: Եվ արգելեց ուտել այդ ծառի պտուղներից: Եվ գիտե՞ս, թե հետո ինչ տեղի ունեցավ: Մարդիկ չհնազանդվեցին Աստծուն, կերան այդ ծառի պտղից: Նրանք մեղք գործեցին և դարձան մահկանացու:

Իսկ ի՞նչ անել հիմա: Չէ՞ որ մարդիկ ստեղծվել էին Աստծո հետ հավիտենությունում ապրելու համար: Բայց Աստված հենց ամենասկզբից, երբ դեռ ոչինչ չկար, ուներ ծրագիր. մեր աշխարհ եկավ Աստծո Որդի Հիսուս Քրիստոսը, Որի միջոցով ստեղծվել էր ողջ աշխարհը, որպեսզի հնարավորություն տար յուրաքանչյուրին, ով կհավատա Իրեն, վերադառնալ Աստծո մոտ:

Այն բանից հետո, երբ Հիսուս Քրիստոսը խաչի վրա մահացավ բոլոր մարդկանց մեղքերի համար և հարություն առավ մահացածներից, ամեն Նրան հավատացողը դառնում է Աստծո որդին և դուստրը: Նա Իրեն հավատացողին տալիս է Իր Սուրբ Հոգին, որ նա կարողանա հաղորդակցվել Աստծո հետ: Եվ յուրաքանչյուրն, ով ունի այդ Հոգին, դառնում է Քրիստոսի Եկեղեցու անդամ:

Եկեղեցին ծնվել է Երուսաղեմում, Պենտեկոստեի օրը, շուրջ երկու հազար տարի առաջ: Բայց այն գոյություն ունի նաև այսօր: Եվ լինելու է հավիտյան: Այն ստեղծված է հավիտենության համար, իսկ ողջ աշխարհը՝ նրա համար:

Փա՜ռք Աստծուն Իր իմաստության և սիրո համար, Իր առատաձեռնության և ամենակարողության համար: Փա՜ռք Հիսուս Քրիստոսին:



ԸՆԿԵՐՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՈՉ ՈՔ ՉԻ ՏԵՍԵԼ

Օլեսյա Իսահակ

Մարկը մենակ կանգնած էր դպրոցի բակում: Ուրախ աղմկող տղաներն ու աղջիկները բաժանվում էին խմբերի. ամեն մեկն իր ընկերախումբն ուներ: Միայն Մարկը դպրոցում ընկերներ չուներ:

Նա ընդհանրապես տարբերվում էր մյուսներից: Նրա հետաքրքրությունները և հոբբիները բոլորովին այլ էին. մուլտերի և ֆիլմերի փոխարեն հաճույքով դիտում էր կենդանիների մասին հաղորդումներ, կոմիքսների փոխարեն կարդում էր գիտական ամսագրեր: Նա տեսախաղեր չուներ, բայց ժամերով փակվում էր իր «լաբորատորիայում»: Մյուս երեխաները հետաքրքրված չէին այդ ամենով: Նույնիսկ երբեմն ծաղրում էին նրան՝ անվանելով «բուսաբան» և «միայնակ Մարկ»:

Բայց հետաքրքիր է ահա, թե ինչը. հաճախ, երբ դասարանը պատրաստվում էր գնալ թանգարան, թատրոն կամ արշավ, Մարկը քաղաքավարությամբ հրաժարվում էր և ասում, որ զբաղված է: Մե՛կ նրան ծնունդի էին հրավիրել, մե՛կ նա պետք է ինչ-որ ճամբար գնար, մե՛կ էլի ինչ-որ տեղ՝ իր ընկերների հետ:

Դասարանցիները չէին հավատում, որ նա իրոք ընկերներ ունի: Չէ՞ որ դպրոցում դեռ ոչ ոք չէր տեսել, որ Մարկի հետ ինչ-որ մեկը խաղար դասամիջոցների ժամանակ:

Ահա այս անգամ էլ կենսաբանության ուսուցչուհին հայտարարեց.

– Դպրոցը մեզ համար էքսկուրսիա է կազմակերպում դեպի գազանանոց: Կիրակի, առավոտյան ժամը տասին մենք հանդիպելու ենք դպրոցի բակում: Եթե ինչ-որ մեկը կիրակի չի կարող գալ, թող ծնողները զանգահարեն ինձ:

Մարկը դանդաղ ձեռք բարձրացրեց.

– Ես, ցավոք սրտի, կիրակի առավոտյան չեմ կարող:

– Ի՞նչ է, երևակայական ընկերներիդ ես հանդիպելու՞, – հեգնեց ինչ-որ մեկը, իսկ ողջ դասարանը ծիծաղեց:

Մարկն իջեցրեց ձեռքը: Եվ այդպես էր ամեն անգամ...

Նոր քառորդի սկզբում 6 բ դասարանում նորեկ հայտնվեց: Եվ քանի որ միայն Մարկի կողքին նստող չկար, նրան նստեցրին Մարկի հետ նույն նստարանին: Արտյոմը շատ ուրախ տղա էր և սքեյթբորդ էր քշում: Դասարանի ակտիվ երեխաներն անմիջապես ցանկացան նրան իրենց խումբ ընդունել:

Գրեթե ամեն առավոտ Մարկն ու Արտյոմը պատահաբար հանդիպում էին վերելակում: Այնպես էր պատահել, որ նրանք հիմա նույն մուտքում էին ապրում: Կամա, թե ակամա նրանք ստիպված էին միասին դպրոց գնալ: Այդպես, մի անգամ առավոտյան նրանք սկսեցին զրուցել:

– Ինչու՞ ես դու բոլորին ասում, որ ընկերներ ունես: Չէ՞ որ դու դպրոցում ոչ մեկի հետ չես շփվում, – հարցրեց Արտյոմը:

– Իմ ընկերները մեր դպրոցում չեն սովորում...

– Բոլորը ծաղրում են քեզ, որովհետև երբեք քեզ ուրիշ երեխաների հետ չեն տեսել: Դու վստա՞հ ես, որ քեզ համար ընկերներ չես հորինում:

Մարկը գլխով արեց.

– Ես եկեղեցի եմ հաճախում և այնտեղ շատ ընկերներ ունեմ:

– Հա՜, – երկարացրեց Արտյոմը, – ես մի անգամ տատիկիս հետ եղել եմ եկեղեցում: Այնտեղ ձանձրալի էր, և երեխաներ էլ գրեթե չկային:

– Մեր եկեղեցին ուրիշ է: Մենք այնտեղ բոլորս ընկերներ ենք: Հաճախ պաշտամունքներից հետո խաղում ենք խաղահրապարակում, միմյանց հյուր ենք գնում... Ուզո՞ւմ ես, կարող ես ինքդ էլ համոզվել, կիրակի արի՛ ինձ հետ:

Արտյոմին շատ հետաքրքրեց: Նա պատկերացրեց, թե ինչպես է «միայնակ Մարկը» խաղում իր երևակայական ընկերների հետ: Ախր այս տարօրինակ տղան չի կարող շատ ընկերներ ունենալ:

Արտյոմը կարողացավ համոզել մայրիկին: Կիրակի առավոտյան նա Մարկի ու նրա ծնողների հետ գնաց եկեղեցի:

Երբ երեխաները մտան ներս, ինչ-որ անհասկանալի բան կատարվեց: Մարկին ասես իսկույն փոխեցին: Նա սկսեց ժպտալ և վազեց նստարաններին նստած տղաների ու աղջիկների մոտ: Տղաներից մեկն անմիջապես թռավ Մարկի մեջքին և բացականչեց. «Բարև»: Ակնհայտ էր, որ նրանք մտերիմ ընկերներ էին:

Այնուհետև Մարկը երեխաներին ներկայացրեց հյուրին.

– Երեխանե՛ր, նա Արտյոմն է՝ իմ դասարանցին:

Բոլորը ժպտացին ու ասացին.

– Բարև, Արտյո՛մ:

Նա բերանը բաց կանգնել էր և չէր կարողանում մի բառ անգամ ասել:

– Դուք իրոք որ իրական եք... – արտաբերեց նա:

Երեխաները ծիծաղեցին:

– Դե հա, – ասաց այն նույն տղան, որ թռել էր Մարկի մեջքին, և ձեռքը մեկնեց Արտյոմին, – արի՛ ընկերանանք:

Այդպես Արտյոմը ծանոթացավ Մարկի ընկերների հետ: Այդուհետ 6 բ դասարանում արդեն երկու տղա իսկական ընկերներ ունեին, որոնց ոչ ոք չէր տեսել դպրոցում:

Նկ. Վիկտորյա Դոմնաևա

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՖՈՒՏԲՈԼՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Ամերիկյան ֆուտբոլը շատ արագ խաղ է, որտեղ մեծ է խաղացողների միջև ֆիզիկական կոնտակտը: Այդ պատճառով էլ ամերիկյան ֆուտբոլն անվանում են կոնտակտային սպորտ: Ահա մի քանի հետաքրքիր փաստ.

1. Խաղի նպատակն է՝ գնդակը հնարավորինս հեռու տանել և գնդակով հասնել միավորային գոտի: Դա կոչվում է թաչդաուն:
2. Գնդակը տանող խաղացողների ճանապարհին կանգնում է հակառակորդ թիմը, որը խոչընդոտում է նրանց՝ հասնել նպատակին:
3. Հետաքրքիր է, որ խաղացողները դաշտում լիակատար ինքնուրույն չեն գործում: Խաղի ժամանակ նրանք կատարում են իրենց մարզչի հրահանգները: Յուրաքանչյուր խաղացող կրում է պաշտպանական սաղավարտ: Թիմի ավագի սաղավարտագլխարկում ներկառուցված է ականջակալ. որի միջոցով մարզիչը հրահանգներ է տալիս ավագին, իսկ նա՝ իր հերթին, բոլոր մյուսներին: Դա նշանակում է, որ խաղում միշտ գլխավոր է մնում մարզիչը:
4. Թիմը բաժանվում է երեք խմբի. հարձակման խումբ (նրանք, ովքեր տիրում են գնդակին և այն տանում դեպի նպատակ), պաշտպանության խումբ (նրանք, ովքեր խոչընդոտում են հակառակորդի առաջընթացը գնդակով) և հատուկ խումբ (յուրաքանչյուր խաղացող ունի իր գործառույթը):
5. Քվոտերբեքը (ավագը) հարձակման գլխավոր խաղացողն է և ողջ թիմի առաջնորդը: Նա է որոշում, թե թիմն ինչ է անելու, կամ հրահանգ է ստանում մարզչից: Քվոտերբեքը փոխանցում է կատարում այն խաղացողին, որը պետք է գնդակը տանի դեպի նպատակակետը, կամ ինքն է գնդակը տանում առաջ: Շատ կարևոր է, որ թիմը լսի քվոտերբեքին:
6. Թիմում ամեն խաղացող ունի իր խնդիրը, յուրաքանչյուրն անում է միայն այն, ինչին իրեն պատրաստել է մարզիչը: Կենտրոնը պետք է գնդակը քվոտերբեքին հետ ուղարկի խաղի սկզբում: Եվ նա ուրիշ ոչինչ չի անում: Նա միայն մեկ պարտականություն ունի, որը պետք է կատարյալ կերպով իրագործի: Կրիկերի խնդիրն, օրինակ, դուրս հանել գնդակը առաջին խաղարկման ժամանակ:
7. Յուրաքանչյուր խաղացող ունի պաշտպանիչ հանդերձանք և հատուկ կոշիկ:
8. Ամերիկյան ֆուտբոլի գնդակը շատ արտասովոր ձև ունի: Այն ձվաձև է և իր ձևով ինչ-որ չափով հիշեցնում է սեխ: Եվ դա պատահական չէ: Չէ՞ որ այս սպորտաձևում գնդակն ավելի հաճախ գցում են, քան ոտքով հարվածում: Նման գնդակով ավելի հեշտ է նշանակետին հարվածելը:

Ո՞ՐՆ Է այս սպորտաձևի և եկեղեցու ընդհանրությունը

1. Եկեղեցու խնդիրը Բարի լուրը հասցնելն է բոլոր նրանց, ովքեր դեռ չեն լսել այն, այսինքն՝ այն նպատակակետին «բերելը»: Դա է մեր թաչդաունը:
2. Եկեղեցին ունի հակառակորդ՝ սատանան: Նա խոչընդոտում է եկեղեցուն և չի ուզում, որ այն հասնի իր նպատակին:
3. Եկեղեցում ամենագլխավորն Աստված է: Նա «մարզում է» յուրաքանչյուրիս, բաշխում է խնդիրները, իսկ «խաղի» ժամանակ առաջնորդին, հովվին կամ հոգևոր ուսուցչին հրահանգներ է փոխանցում, որոնք դրանք հասցնում են մեզ:
4. Եկեղեցում կան տարբեր խմբեր, որոնք աշխատում են իրենց ոլորտներում. մեկը ղեկավարում է եկեղեցին, մեկը քարոզում է, մյուսները երաժշտական ծառայությունն են կատարում, իսկ երրորդները՝ մանկական ծառայությունը:
5. Հովիվը կամ քահանան եկեղեցում հատուկ խնդիր ունի: Նրա վրա առավելագույն պատասխանատվություն է դրված: Նա պետք է լավ հասկանա Աստծո կամքը և խրատի հավատացյալներին:
6. Եկեղեցու ամեն անդամ ունի իր խնդիրը: Պատկերացրու՛, ինչ կլինի, եթե այն խաղացողը, որի խնդիրը գնդակին հարվածելն է և որը լավ է կարողանում անել դա, փորձի միշտ գնդակ նետել:
7. Ամեն քրիստոնյա ունի հոգևոր հանդերձանք: Այդ մասին դու կարող ես կարդալ Եփեսացիների նամակում (6.14-17):
8. Ուղերձը, որը քրիստոնյաները պետք է հասցնեն այս աշխարհին, տարբերվում է այս աշխարհի ուսմունքներից: Դրա էությունն այն է, որ Աստված սիրում է բոլոր մարդկանց և Իր Որդուն մահվան է մատնել հանուն նրանց: Հիսուս Քրիստոսը մահացել է մարդկանց մեղքերի համար և հարություն առել մահացածներից: Ամեն ոք, ով հավատում է դրան, ապրելու է Աստծո հետ երկնքում:

ՈՒՐԵՄՆ ԱՅՆՊԵՍ ՎԱՋԵՔ, ՈՐ ԿԱՐՈՂԱՆԱՔ ՆՎԱՃԵԼ: 1ԿՈՐ. 9.24

Նկ. Մարիաննա Միքիտյուկ

10 հետաքրքիր փաստ Աստվածաշնչի մասին

1. Աստվածաշունչը հանդիսանում է ամենաշատ հրատարակվող և վաճառվող գիրքն աշխարհում: 1815-1975թ. ընթացքում տպագրվել է 5 մլրդ. օրինակ:

2. Աստվածաշունչը գրվել է մ.թ.ա. 1500թ.-ից մինչև մ.թ. 100թ.-ը:

3. 1600 տարվա ընթացքում Աստվածաշունչը գրվել է 40 հեղինակների կողմից:

4. 2019թ.-ի դրությամբ Աստվածաշունչը արդեն թարգմանվել էր 3.384 լեզվով:

5. Աստվածաշնչի հեղինակները տարբեր մասնագիտություններ են ունեցել. օրինակ՝ բժիշկ, թագավոր, զորավար, պետական պաշտոնյա և նույնիսկ հովիվ ու ձկնորս:

6. Աստվածաշնչում դեռ 2500 տարի առաջ գրվել էր այն մասին, որ երկրագունդը կլոր է, իսկ գիտությունը դա բացահայտել է միայն 16-րդ դարում:

7. Գիտնականների հաշվարկներով աշխարհում յուրաքանչյուր 2 րոպեն մեկ տպագրվում է 5 օրինակ Աստվածաշունչ:

8. 1300ական թ-ին ձեռագիր Աստվածաշնչի գինը հավասար էր մի շքեղ դղյակի արժեքին: Հենց այդ պատճառով ստեղծվեցին տպագրիչ մեքենաները, որպեսզի Աստծո Խոսքը հասանելի դառնա բոլորին:

9. Աստվածաշնչում «մի վախեցիր» արտահայտությունը կրկնվում է ուղիղ 365 անգամ:

10. Ամբողջ Աստվածաշունչը ընթերցելու համար քեզ հարկավոր է ընդամենը 49 ժամ (անդադար ընթերցելու դեպքում):

Կազմեց Անահիտ Սարգսյանը

ԵՍ «ՓՈՔՐԻԿ ԳԱՌՆՈՒԿՆ ԵՄ»

Օլգա Մարտինովա

Իսկ դու գիտե՞ս, որ գործնականում հնարավոր չէ ոչխարի հոտը երկու մասի բաժանել: Ինչո՞ւ, կհարցնես դու: Բանն այն է, որ ընտանի ոչխարների մոտ շատ զարգացած է հոտային բնազդը: Նվազագույն վտանգի դեպքում նրանք խմբեր են կազմում և աշխատում են հնարավորինս խիտ հավաքվել: Այդպես ավելի անվտանգ է: Եթե ինչ-որ գառ հետ է մնում հոտից, ամենայն հավանականությամբ, նա հիվանդացել է:

Ոչխարների հոտային վարքի ևս մեկ առանձնահատկություն. նրանք միշտ հետևում են առաջնորդին: Մեկը շրջանցեց քարը, ողջ հոտը կհետևի նրան:

Ընտանի ոչխարները շատ համերաշխ կենդանիներ են: Նրանց համար կարևոր է հոտին մաս կազմելը: Ասում են, որպեսզի գառնուկն իրեն անվտանգ և հարմարավետ զգա արածելու ընթացքում, նրան հարկավոր է հինգ ընկերուհիների ընկերակցությունը:

Իսկ դու գիտե՞ս, որ պարտադիր չէ, որ ոչխարը գլուխը հետ շրջի: Աչքերի կողային դասավորության ու հորիզոնական ձգված բիբերի շնորհիվ նրա տեսադաշտը շատ մեծ է, եթե, իհարկե, նրա աչքերը չի փակում բուրդը: Իսկ այ ոչխարների տարածական ընկալումը թույլ է զարգացած: Այդ պատճառով ճանապարհին ցանկացած ստվեր կամ փոս արգելակում են հոտի ընթացքը:

Ոչխարների համար շատ կարևոր է տեսողական շփումը միմյանց հետ: Ժամանակ առ ժամանակ նրանցից յուրաքանչյուրը բարձրացնում է գլուխը, որպեսզի համոզվի, որ մյուս գառնուկները մոտակայքում են, և հանգստանում է:

Ոչխարների լսողությունը ևս լավ է զարգացած, և նրանք շատ զգայուն են հանկարծակի աղմուկի հանդեպ:

Իսկ դու գիտե՞ս, որ կան կարճապոչ և երկարապոչ ոչխարներ: Կարճապոչ ոչխարների թվին են պատկանում ռոմանովյան ոչխարները, որոնց մորթին շատ թանկ է գնահատվում: Երկարապոչ ոչխարները մսատու տեսակներն ու մերինոսներն են (նրանք տարեկան մինչև 10 կգ. բուրդ են տալիս): Երկարապոչ ոչխարների բարակ բուրդը պճնամոլների շրջանում մեծ ճանաչում էր վայելում դեռ Հին Եգիպտոսում և Բաբելոնում:

Հաստապոչ ոչխարների թվին են պատկանում կարակուլյան ոչխարները, որոնք ապրում են Ուզբեկստանում: Նրանք պահանջկոտ չեն կերի հարցում և կարող են ապրել նաև անապատում: Կարակուլ թարգմանաբար նշանակում է «սև լիճ»:

Դմակավոր ոչխարներն իրենց անունը ստացել են պոչի շուրջ ձևավորված մեծ ճարպային շերտի պատճառով: Այդ պարկերում կարող է մինչև 16 կգ. ճարպ պարունակվել:

Ոչխարները մարդուն տալիս են կաթ և միս, բուրդ և ոչխարի մորթի: Ոչխարների ամենաարժեքավորը նրանց բուրդն է:

Աստվածաշնչի էջերում ևս մենք հանդիպում ենք ոչխարի կերպարին: Հիսուս Քրիստոսն Իրեն անվանում է Բարի Հովիվ (Գառնարած), իսկ Իր աշակերտներին՝ գառներ:

ՍԱՂՄՈՍ 100

Ցնծության աղաղա՛կ բարձրացրեք
Տիրոջը, դու՛ք, բոլոր երկրներ:
Ծառայեցե՛ք Տիրոջն ուրախությամբ.
Նրա ներկայության առջև եկե՛ք
երգելով: Ճանաչեցե՛ք, թե Տերն Ինքն է
Աստված. Ինքն է ստեղծել մեզ, և ոչ թե
մենք ինքներս: Մենք նրա ժողովուրդն
ու Նրա արոտի ոչխարներն ենք:

Մտե՛ք Նրա դռներից
գոհությամբ, ու Նրա սրահները՝
փառաբանությամբ, շնորհակա՛լ
եղեք Նրան ու օրհնեցե՛ք Նրա
անունը: Քանի որ Տերը բարի է.
Նրա ողորմությունը հավիտյան է.
ու Նրա ճշմարտությունը՝ սերնդից
սերունդ:

Նկ. Մարիամ Ղուկասյան

ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԸ

Ելենա Սենյուտա

Կիրակին եկավ:

– Տղա՛ս, արթնացի՛ր: Շուտով Դավիթը կգա քո հետևից, իսկ դու դեռ քնած ես, – լսվեց մայրիկի ձայնը:

Միքայելը մի կերպ բացեց աչքերը: Առավոտը մռայլ, անձրևոտ ու ամպամած էր:

«Ինչ-որ վատ եղանակ է, և տրամադրություն էլ չկա», – մտածեց Միքայելը՝ ուժեղ տրորելով աչքերը և հորանջելով:

«Պետք է Դավիթին համոզել այսօր տանը մնալ: Ի՞նչ կլինի: Չէ՞ որ կիրակնօրյա դպրոցն առանց մեզ փուլ չի գա, և պաշտամունքն էլ կանգ չի առնի: Մայրիկն ու հայրիկը թող գնան, իսկ մենք՝ երեխաներս, մեզ հանգստանալ է պետք, – այդպես էր մտածում Միքայելը՝ ոտքը մտցնելով տաբատի փողքի մեջ, – երանի՜ հաջորդ շաբաթը՝ ծննդյանս օրը, շուտ գար... Ի՞նչ նվեր խնդրեմ մայրիկից»:

«Ծլլընգ-ծլլընգ», – լսվեց դռան զանգը: Մի քանի վայրկյանից Միքայելի սենյակ ներխուժեց Դավիթը:

– Քնկո՜տ, դեռ չես հագնվե՞լ: Գուցե օգնե՞մ, – աշխույժ բացականչեց Դավիթը:

– Դավի՜թ, – Միքայելի ձայնի մեջ տխրության նոտաներ նշմարվեցին, – այսօր մռայլ, անձրևոտ օր է, գլուխս բոլորովին չի աշխատում...

– Ի՞նչ ես հիմարություններ դուրս տալիս:

– Հիմարություն չի, – փնթփնթաց Միքայելը, – դու, ավելի լավ է, մտածի՛ր: Մենք պետք է մի օր հանգստանանք, չէ՞:

– Դու ի՞նչ է քունդ չես առե՞լ, – չէր կարողանում հասկանալ Դավիթը, – ո՞վ էր խանգարում:

– Ա՜խ, ամեն ինչ պետք է բացատրել քեզ...

– Միայն թե արագացրու, որովհետև կիրակնօրյա դպրոցից կուշանանք:

– Դե ես էլ դա եմ ասում... Արի՛ այսօր չգնանք... միանգամից ասաց Միքայելը:

Դավիթի հոնքերը թռան ճակատին:

– Միասին մրցավազք կկազմակերպենք, կխաղանք, կհանգստանանք, – շարունակում էր Միքայելը, – դե՜... կամ էլ միասին դասերը կսովորենք: Կիրակնօրյա դպրոցը չի կորչի չէ՞, եթե մենք մի անգամ չգնանք: Ժողովն էլ կանգ չի առնի: Մենք դեռ երեխա ենք, չէ՞: Մայրիկներն ու հայրիկները թող գնան, իսկ մենք տանը կմնանք:

– Իսկ ծնողներին ի՞նչ ենք ասելու, – մտածեց Դավիթը:

– Դե, օրինակ, կասենք, որ դասերը դեռ չենք սովորել...

– Չէ՜, Մի՛ք, չի լինի, – շշնջաց Դավիթը, – իսկ եթե մի կարևոր բան բաց թողնե՞նք: Բացի այդ, ստելը լավ բան չէ:

– Է՜հ, – հոգոց հանեց Միքայելը, – ի՜նչ ճիշտն ես դու: Լա՜վ, գնանք եկեղեցի: Իսկ ի՞նչ ես կարծում, ծննդյանս օրվա առթիվ ծնողներիցս ի՞նչ նվեր խնդրեմ:

Օրն արագ անցավ: Սկզբում կիրակնօրյա դպրոցի դասը, հետո՝ պաշտամունքը: Եվ ահա, ընկերներն արդեն տուն են վերադառնում թաց արահետով՝ կոշիկներով այս ու այն կողմ թռցնելով ոսկեզօծ տերևները:

– Բայց դու ապրե՛ս, Դավի՛թ, որ առավոտյան հաղթեցիր, – հանկարծ ասաց Միքայելը:

– Ի՞նչ ես խոսում, – զարմացավ Դավիթը՝ հոնքերը վեր հանելով, – մենք, կարծես թե, չենք էլ կռվել:

– Դու նորից ինձ չես հասկանում, – հոգոց հանեց Միքայելը, – լավ էր, որ այսօր առավոտյան ինձ չլսեցիր, ու մենք ամեն դեպքում գնացինք եկեղեցի: Ես առաջ մտածում էի, որ դա մեծերի գործն է. միշտ ժողովների գնալ: Իսկ այսօր հասկացա, որ նաև երեխաների գործն է:

– Այդ ե՞րբ հասցրեցիր հասկանալ:

– Հիշո՞ւմ ես, այսօր կիրակնօրյայի դասի ժամանակ պատմում էին, թե Հիսուսն ինչպես մեծերին ասաց, որ երեխաներին չխանգարեն մոտենալ Իրեն, որովհետև նրանցն է Աստծո Թագավորությունը: Այդ ժամանակ էլ հասկացա, որ Հիսուսն Ինքն է սպասում մեզ:

– Այո՜: Հրաշալի՜ է, – համաձայնեց Դավիթը:

– Բացի այդ, պատկերացնու՞մ ես, այսօր ես բոլորովին չձանձրացա պաշտամունքին նստելուց: Կիրակնօրյա դպրոցում ասացին, որ Հիսուսը միշտ այնտեղ է, որտեղ երկու կամ երեք հոգի հավաքվում են Իր համար: Իսկ մեր ողջ եկեղեցին էր հավաքվել: Ու ես լուռ նստած էի, թեկուզ ամեն ինչ չէր, որ հասկանում էի, բայց այնքա՜ն հաճելի էր, որ Հիսուսը կողքիս էր:

Դավիթը մտածեց: Նա պատկերացնել անգամ չէր կարող, որ իր ընկերն այդքան արագ կփոխվի:

– Բացի այդ էլ, ես մտածեցի, թե ինչ նվեր խնդրեմ ծննդյանս օրվա առթիվ: Իմ սեփական զարթուցիչը: Կսովորեմ այն օգտագործել և թե՛ ինձ, թե՛ քեզ կարթնացնեմ:

Դավիթը ծիծաղեց:

– Դե ինչ, ինքդ խնդրեցիր:

ԿՌԱՀԻ՛Ր ԱՆՈՒՆՍ

Կազմեց Էլվիրա Յորնը

Կռահի՛ր, թե ով է պատկերված նկարներում:

ԵՐԵԿՈՅԱՆ ԺՈՂՈՎ

Կլավդիոսը ցանկանում է հասնել հավատացյալների ժողովին:
Օգնի՛ր նրան՝ գտնել այն տունը, որտեղ հավաքվել են քրիստոնյաները:

ԳՏԻ՛Ր ԳԱՌՆՈՒԿՆԵՐԻՆ

Ողջ ամսագրում թաքնված է 12 գառնուկ: Կարո՞ղ ես գտնել նրանց:

Նկ. Յակոով Բոլորդա

Տերը իմ հովիվն է.



Նոտագրեց Անահիտ Սարգսյանը

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԷՋ

Մեր ընթերցողները կիսվել են իրենց ստեղծագործություններով: Հնարավոր է, դու ցանկանաս անգիր սովորել այս ոտանավորներից մեկը և արտասանել այն եկեղեցում:

ՄԻԱՅՆ ԴՈՒ

Միայն Դու ես, իմ Տե՛ր,
Պարգևում փրկություն,
Միայն Դու ես, իմ Տե՛ր,
Դու ես մխիթարում:

Միայն Դու ես, իմ Տե՛ր,
Քեզնով է պարզ աշխարհը,
Միայն Դու ես, իմ Տե՛ր,
Այսքան մեծ, հրաշագեղ:

Ապավենն իմ միակ,
Դու՝ հաղթություն մահվան,
Հավատում եմ Արքայությանդ
Ողջ աշխարհի հանդեպ:

Միայն Դու ես, իմ Տե՛ր,
Դու ես փրկությունն այն,
Միայն Դու ես, իմ Տե՛ր,
Սփոփանքը միակ:

Լոկ Քեզ մոտ պիտ ապրեմ
Միայն Քեզ գովերգեմ,
Քեզ պիտի ծառայեմ,
Ամենից վեր դասեմ:

Լենա Կամալովա, 15 տ., Ռուսաստան

ԱՍՏՎԱԾ ՀՐԱՇՔ Է

Շատերն են կարծում, մի բանի հավատալ
Կարելի է միայն տեսնելով կամ գոնե մի փոքր շոշափելով այն,
Բայց ես կարող եմ ձեզ հաստատ ասել. «Նման մտքերը հիմարություն են»:
Ես հաստատ գիտեմ՝ Աստված Հրաշք է, թեկուզ և Նրան ոչ ոք չի տեսել:
Ու թե ինձ ասեք. «Սուտ է: Ո՞վ կարող է ապացուցել դա»:
Ես կպատասխանեմ. «Եկեք միասին զբոսանքի գնանք»:

Դու տեսե՞լ ես երկինքը առավոտ ծեգին,
Նման ոսկով ու սաթով վառվող կրակի:
Իսկ տեսե՞լ ես առավոտյան խոտը շաղիկով պատված:
Ասես բյուրեղյա շղարշ է հագել, կամ գարնան անձրևի տակ է մնացել,
Իսկ տեսե՞լ ես, թռչունները ոնց են երկնքում թևում,
Կամ ինչպես են թիթեռները ծաղկից ծաղիկ թռչկոտում:

Թե տեսել ես այս ամենը,
Ապա, ընկե՛ր իմ, ինչու՞ ես,
Նման հարցեր ինձ տալիս,
Փոխարենն այդ հարցերի
Շուրջբոլորդ լա՛վ նայիր:

Մարինա Ֆեդկո, 16 տ., Ռուսաստան

Թարգմանեց Թամարա Լամբրիանովան

***

Թե հավատում ես Հիսուս Քրիստոսին,
Էլ ոչ մի փորձանք քեզ չի վախեցնի,
Թե՛ ձյուն, թե՛ քամի,
Թե՛ անձրև, թե՛ բուք,
Քրիստոսի հանդեպ հավատով լցվի՛ր,
Ու թե մի փորձանք պատահի քեզ հետ,
Իմացի՛ր. Քրիստոսում փրկություն ունես:

Դարյա Խանդոգինա, 9 տ., Ռուսաստան

ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԱԿՐՈՍՏԻՔՈՍ

Ի՞նչ է ակրոստիքոսը

Ակրոստիքոսը ոտանավորի ձև է, որում տողերի առաջին բառերի սկզբնատառերն առանձին բառ են կազմում: Բանաստեղծության թեման կամ այն մարդու անունը, ում այն նվիրված է, սովորաբար թաքնված են այդ բառում:

Օրինակ, **ուղղահայաց** մի անուն գրիր:

Ա
Ն
ՈՒ
Շ

Հիմա մտածի՛ր բառեր, որոնք կսկսվեն այդ տառերով: Բանաստեղծությունը կարող է ունենալ հանգ, բայց կարող է և չունենալ:

Օրինակ

Անչափ բարի ու գեղեցիկ,
Նուրբ ու քնքուշ իմ լավ քույրիկ,
ՈՒրա՛խ եղիր կյանքում դու միշտ
Շողա՛, ինչպես լույսն արևի:

Դու կարող ես գրել սիրելի տոնի, մտերիմ ընկերոջ, ծնողներիդ կամ սիրելի հոբբիիդ մասին: Ահա ևս մեկ ակրոստիքոս՝ նվիրված բոլոր մարդկանց լավագույն Ընկերոջը:

Հաղթեց մահին Նա Իր կյանքով,
Իրեն զոհեց հանուն մարդու
Սիրով Աստծո՝ Երկնավոր Հոր
ՈՒղարկվել էր Նա ինձ ու քեզ
Սուրբ փրկություն պարգևելու:

Իսկ հիմա փորձի՛ր ինքդ: Ակրոտիքոս գրիր Բերքի տոնի, Մայրության օրվա մասին, սիրելի ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի մասին:

_____
_____
_____
_____

ՓՈՔՐԻԿ ԱՎԵՏԱՐԱՆԻՉՆԵՐ

Քարև, սիրելի՛ Արահետ: Մենք Էլենն ու Սյուզին ենք՝ զույգ քույրեր: Ապրում ենք Լորուտ գյուղում: Մենք շատ ենք սիրում Աստծո խոսքը: Մեր ազատ ժամանակը տրամադրում ենք Արահետ կարդալուն և Արահետը բաժանում ենք մեր ընկերներին: Շատ ուրախ ենք, որ հայերեն կա այսպիսի հրաշալի ամսագիր, որից կարող ենք շատ բան սովորել: Մեր դպրոցի դասղեկը նույնպես շատ է սիրում Արահետ ամսագիրը և ժամանակ առ ժամանակ Արահետը կարդում է երեխաների համար:



10 ՀՐԱՇԱԼԻ ԳԱՂԱՓԱՐ ԱՄԱՌԸ ՓՈՔՐ-ԻՆՉ ԵՐԿԱՐԱԺՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Բռնոցի արևի հետ

Արևոտ օրերը հետզհետե պակասում են: Բաց մի՛ թող պահը. հարմար տեղավորվի՛ր պատուհանագոգին կամ այգում և վայելի՛ր ամռան վերջին շողերը:

2. Նոր դասավորություն սենյակում

Ծնողներիդ թույլտվությամբ տեղափոխություն արա՛ սենյակումդ, զարդարի՛ր այն նոր նկարներով և զարդարանքով: Նույնիսկ փոքր փոփոխությունները կարող են մեծ նշանակություն ունենալ:

3. Համեղ տոն

Հրավիրի՛ր ընկերներիդ (այդ թվում ոչ հավատացյալ) Բերքի տոնին: Թող ամեն մեկը բերի իր սիրելի միրգը, միասին մրգային աղցա՛ն պատրաստեք (հնարավոր է, ունենաս ծնողներիդ օգնության կարիքը) և շնորհակալությու՛ն հայտնեք Աստծուն համեղ կերակրի համար, որ Նա տալիս է մեզ:

4. Տնային ճամբար

Կարևոր չէ այգում, թե հյուրասենյակում, իսկական վրանով, թե սովորական ծածկոցով, ընկերներիդ հետ, թե տնային կենդանիների, կազմակերպի՛ր «ամառային» ճամբար:

5. Բարի լուրը ժեստերով

Մի քանի բառ սովորի՛ր ժեստերի լեզվով (համացանցում գտի՛ր այդ մասին տեսահոլովակ կամ հոդված): Սովորի՛ր, ինչպես կարելի է ասել. «Աստված սիրում է քեզ»:

6. Օճառե շղթա

Հսկայական օճառե պղպջակներով շղթա՛ կազմակերպիր (տե՛ս էջ 28): Ուրախացրո՛ւ ընկերներիդ և փոքրիկներին խաղահրապարակում, կամ եկեղեցու բակում պաշտամունքից հետո ներկայացում կազմակերպելու թույլտվությու՛ն խնդրիր:

7. Լուսանկարչական հուշեր

Ամառային ժամանցից նկարնե՛ր երևակիր: Դրանք կարող են լինել նկարներ ընկերների, եղբայրների ու քույրերի հետ, ծնողների, տատիկների ու պապիկների հետ: Նկարի հակառակ կողմում գրի՛ր, թե որքան հաճելի էր նրանց հետ անցկացրած ժամանակը, և նկարները նվիրի՛ր նրանց, ում հետ նկարվել ես:

8. Թղթե ամառ

Հավաքի՛ր բոլոր «Արահետ» ամսագրերը, որ դու ունես, կամ մանկական գրքեր և գտի՛ր դրանցում պատմվածքներ, որոնց իրադարձությունները տեղի են ունենում ամռանը: Եվս մեկ անգամ սուզվի՛ր ամառային մթնոլորտի մեջ՝ առանց տնից դուրս գալու:

9. Արագ աճ

Վերցրու՛ լապտերը և ուղղի՛ր այն դիմացի շենքին կամ սենյակի պատին: Լապտերը դի՛ր գետնին ու հենի՛ր ինչ-որ բանի, կամ խնդրի՛ր, որ ընկերդ բռնի: Կարևոր է, որ լապտերը լուսավորի ներքևից վերև: Նայի՛ր, թե ինչ շուտ մեծացար դու: Ավելի ճիշտ՝ քո ստվերը:

10. Ամառային պահարան

Մայրիկի կամ հայրիկի հետ ընտրի՛ր քո ամառային հագուստները, առանձնացրո՛ւ նրանք, որ փոքրացել են քո հագով, նրանցից, որ եկող տարի դեռ կարող ես հագնել: Փոքրացած հագուստդ նվիրի՛ր նրան, ով ունի դրա կարիքը և ում սազում է այն:

ՀՍԿԱՅԱԿԱՆ ՕՃԱՌԵ ՊՂՊՋԱԿՆԵՐ

Ինչպես պատրաստել.

1. Խառնի՛ր բոլոր բաղադրիչները թասիկի մեջ և այն դի՛ր հով տեղում ողջ գիշեր:

2. Կտրի՛ր 2 կտոր պարան. մեկը մյուսից երկար: Պարանը երկու ծայրերից ձողերին կապի՛ր այնպես, որ երկար պարանը կախվի ներքև, իսկ կարճը մնա վերևում:

Քեզ անհրաժեշտ կլինի.

- Հեղուկ գլիցերին (այն կարելի է գնել դեղատնից) – 50 մլ.
- Ման լվանալու հեղուկ – 100 մլ.
- Շաքարավազ – 4 թեյի գդալ
- Ջուր (գերադասելի է՝ թորած) – 300 մլ.
- Երկու նույն երկարության ձող
- Ամուր պարան
- Թասիկ

3. Պարանները մտցրու՛ օճառաջրով թասիկի մեջ, ձգի՛ր ձողերն ու վազի՛ր դրանցով քամուն ընդառաջ, որ հսկայական օճառե պղպջակ առաջանա:

Պատրաստ է:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՅԻՑ ՀԵՏՈ

Ահա և ավարտվեց ժողովը: Ծանո՞թ պատկեր է: Գտի՛ր 12 կենդանի և առարկա.

- խխունջ
- բարձրախոս
- նավակ
- վզկապ
- լամպ
- փիսիկ
- բուտերբրոդ
- աստղ
- պինգվին
- թագ
- ձկնիկ
- գրիչ

Այնուհետ գտի՛ր 7 Աստվածաշունչ, որոնք թաքցրած են այս նկարում:

Անեչկա, 10 տ., Ռուսաստան

Իննա Օլեխովա, 10տ., Ռուսաստան

Արայիկ Հարությունյան
6տ., ք. Արարատ

Անաստասիա Արխիպովա, 8 տ., Լատվիա

Վիրջինիա Բոնտար, 9 տ., Ռուսաստան

Լիլի Մաշկարյան
13տ., ք. Վանաձոր

Անի Մխիթարյան 12տ., գ. Չկալով

Ալլա Օլեխովա, 8 տ., Ռուսաստան

Դասախաղեր

Էջ 2. Եկեղեցի:
Էջ 6. 1. Հովիվը, և,
2. գիտի, ես, կյանքը, համար,
3. լսում, նրանց, 4. մեծ, կարող:
«Որովհետև, ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով՝ ես այնտեղ եմ՝ նրանց մեջ» (Մատթ. 18.20):
Էջ 20. 1, Պիղատոս, 2. Նոյ, 3. Հովսեփ, 4. Դանիել, 5. Դավիթ, 6. Հռութ, 7. Զակքեոս:
Էջ 21. ԵՐԵԿՈՅԱՆ ԺՈՂՈՎ
Էջ 29.





Արահետ 5/21 (23)

«ԼՈՒՅՍ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ» Բարեգործական հասարակական կազմակերպություն:
Մանկական քրիստոնեական ամսագիր:
Լույս է տեսնում տարեկան 6 անգամ:

Ռուսերեն ամսագիրը հրատարակվում է 1990թ. - ից:
Այն հրատարակվում է ռուսերեն, ուկրաիներեն, գերմաներեն, ղազախերեն, ղրղզերեն, բուլղարերեն, ռումիներեն և վրացերեն: 2018թ. - ից՝ նաև հայերեն:

Տպագրվում է կամավոր նվիրատվությունների միջոցով, բաժանվում է անվճար:

Գլխավոր խմբագիր՝ Վալդեմար Ցորն

Հայկական ամսագրի գլխավոր խմբագիր՝ Նինա Կոստանյան
Ամսագրի աշխատակազմ՝ Անահիտ Սարգսյան, Թամարա Լամբրիանովա
Արփինե Մինասյան

Ամսագրին կարող եք բաժանորդագրվել
և ուղարկել նամակներ և նյութեր «Արահետ» ամսագրի խմբագրություն՝ հետևյալ էլ. հասցեով
E-Mail. arahetarm@yandex.ru
Հեռ. +374 98 38 51 38

էջ 7. Լուսանկարը՝© John Cafazza/unsplash.com
էջ 14-15. Լուսանկարը՝© Nick Cozier/unsplash.com, Rick Bartett/unsplash.com
էջ 18–19. «Назидалочки» մանուկների համար պատմվածքների ժողովածուից, © Այլակերպություն եկեղեցի «Samenkorn», 2013
էջ 22. © Վիտալի Կրիվենկով /sacredmusicvk.com
էջ 28–29. Լուսանկարը՝© Maxime Bhm / unsplash.com, Alexander Dummer /unsplash.com

Ռուսերենից թարգմանեց Թամարա Լամբրիանովան

Համակարգչային ձևավորումը՝ Դավիթ Հարությունյանի

Կազմի լուսանկարը՝ © Alonafoto / shutterstock.com

Կրտսեր և միջին տարիքի դպրոցական երեխաների համար

Աստվածաշնչյան մեջբերումները վերցված են «ԱՐԱՐԱՏ» և «TBS» թարգմանություններից:

© «Լույս Արևելքում», 2021թ.

www.lio.ru/tropinka

Լյուբով Լազկո

ՓԱՌՔ ԵՆ ԵՐԳՈՒՄ ԱՍՏԾՈՒՆ

Փառք են երգում Հայր Աստծուն
Ծաղիկ, գազան, թե թռչուն,
Արև ու երկինք լազուր,
Փա՛ռք երգիր Նրան և դու:

Գովերգում են Հիսուսին
Ձկներ, մեղու և սարդեր,
Լուսին ու ամպ, քամի, թե ձյուն,
Գովերգի՛ր Նրան և դու:

Փառք են երգում Հորեղին
Մութ գիշեր թե լուսաբաց,
Սարեր, անտառ, ծով ու գետեր,
Փա՛ռք երգիր Նրան և դու:

Գովերգում են սուրբ Աստծուն
Կրակ, անձրև, մեգ, կարկուտ,
Աստղեր, կայծակ ու ամպրոպ,
Գովերգի՛ր Նրան և դու:

Աստծո զորության համար
Ու Իր մեծության համար
Ամեն վայրկյան գովերգի՛ր
Կյանք պարգևող Արարչին:

Նա ասաց ու արարվեց:
Կարգադրեց, եղավ այդպես:
Գովերգի՛ր, Նա ողորմած է
Երկնքում ու Երկրի վրա:

Թարգմանեց Թամարա Լամբրիանովան